Սրտագին նվեր

Ղազարյան Ն., Պ.

891.99
Ղ-15

1912 - Թիֆլիս.

6 NOV 2001

ՄՐՏԱԳԻՆ ՆՈՒԷՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՀՈՐԻԶՈՆ"
Ред. „ОРИЗОН"

յօրինեց

ՊՕՂՈՍ ՂԱԶԱՐԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Էլէքտրատպարան օր. Ն. Աղանեանցի, Պօլից. 7
1912

891.99
Ղ-15

891.99
26 NOV 2011

ՍՐՏԱԳԻՆ ՆՈՒԷՐ

յօրինեց

ՊՕՂՈՍ ՂԱԶԱՐԵԱՆ

Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Էլէկտրատպարան օր. Ն. Աղանեանցի, Պօլից. 7
1912

19 JUN 2013
ՀՈՐԻԶՈՆ
Ред. ОРИЗОНЪ

Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.

Վեհափառ Կաթողիկոս Ամենայն Հայոց

ԻՄ ՆՈՒԷՐԸ

Իմ վաղեմի բուռն ցանկութիւնն էր լոյս ընծայել ներկայ երկտող բանասիրութիւնս, իբրև մի լումայ բղխած իմ սրտիս խորքերից, նուիրելու Ձեր քաղցր և պատուելի անուան, Աստուածարեալ Մեծ Հայրապետ Տ. Տ. Գէորգ Ե. Սրբազնագոյն Կաթուղիկոսիդ Ամենայն Հայոց, իբրև առաջին փորձ ըստ կարողութեանս, ցոյց տալու որ օտար աստղերի տակ հառաչող պանդուխտ հայերիս վշտացած և կեանքի ծովի մէջ տխուր սրտերը մխիթարութիւն և սփոփանք են գտնելու Ձերդ Վեհափառութիւնից։

Ընդունեցէք նուաստիս այս երկտող գրութիւնը որպէս մեծ պարծանք ինձ տպաւորելու Ձեր պատուելի անունը իմ սրտում միշտ և յաւիտեան։

ՆՈՐԸՆՏԻՐ ՀՈՎՈՒԱՊԵՏ

ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե·

Սրբազնագոյն Կաթողիկոս ամենայն Հայոց

Գ՝Տանք հազիւ ցոլք նշուլից, արփիացնցուղ խաւարին,
Ե՝Իսկ տաժանիքդ գերունակ, նպաստ ամրութեան հաւատին,
Ո՝Ր քոյ բարի արթուն գործով, բարձրացրիր սիկ մեր գլխին,
Ր՝Աբունապետ ունեցանք քեզ, փառք զգացուեց հայ ազգին։

Գ՝Ցիր արմատ գերաշխարիկ, մնաս փայլուն աշտանակ՝
Ս՝Ուրբ մեսիայն քեզ օժանդակէ, անջինջ է քո յիշատակ,
Ո՝Ւնեցած բազում երախտիքդ, պատմեց լրագիր արձագանք,
Ի՝ղնծիւղ ծառի պէս մնաս, ընդունակ բարձրեալ Փրկչին։

Ր՝ենական լոյսն անսգիւտ, քեզ վերայ Տէր Վեհափառ,
Ե՝Պիսկոպոսապետ կարգուար, դատաստանդ անաչառ,
Ն՝Որընտրեալդ Աստուծոյ, նեցուկ լինի քեզի լոյսը մշտավառ.
Ե՝Ղեռնագործներդ դրժեն, դու վսեմաշուք քո հօտին։

Ա՝Իողական չես դառնալ դու, ողկուզաբեր բարունակ,
Ն՝Ստիր երջանիկ վեհ գահիդ, երկարակեաց շարունակ,
Վ՝Սեմ բարութեանդ փոխարէն, դատը Վերնամբցանակ,
Է՝Դիր տիրոջ օրհնեալ անօթ, ոռոգ Պասքեալ ներգև եալին։

Հ՝Արկադրուած ենք աղաչել, բարձրեալ Փրկչին յարաժամ,
Ա՝Զարիային համանըման, յաղթող լեր քո չարակամ,
Փ՝Առաց վերինն թագաւորը պահէ քեզ միշտ անթառամ,
Ա՝Ռարչից է մեծ աստիճանդ, վայել ես քո բարձր պաշտօնին։

Ռ՝ետինդ քաղց ու ըղձամ վեհիդ տեսութեան,
Ա՝ըիաջան գեղեցկատիպ, պատկերիդ չէ լինիլ նըման,

Նախախնամութիւնը օրհնէ, ազգով տոհմով Սուրէնեան,
Ի փրկչէն նուիրած մեզ Հովուապետ Վեհափառ Տէր Տէր Գէ-
որգին։

Անստգիւտ գանձ Վեհափառ Տէր, Էջմիածնի Սուրբ Մայր Աթոռ
քեզ աւանդ,
Սիրտդ տաք կառավարես յարաժամ ունենաս եռանդ,
Արդ աղաչեմ յարարարչէն միշտ յարատև տեսնենք քո տաղանդ
Ցուպ քո ձեռքին ամուր լինի պահես պայծառ եկեղեցին։

Երկիւղած ես դու յաստուծոյ և ժառանգ արքայութեան,
Ամէնն ասեմ արժանի չեմ, գրել բան Վեհիդ անուան,
Լիահանճար անարատ, շնորհաց ես շտեմարան,
Վսեմաշուք ըղձիդ անժան, ողոքս Սուրբ Լուսաւորչին։

Սուրբ Էջմիածնի սինոդն է Տէր իմ ատեանդ ահեղ։
Յուսամ անդամներդ լինին շնորհալի մտքով ուժեղ,
Գերաշխարհիկ ողջ միաբաններդ քեզի հետ միասին մէկ տեղ,
Կազմէք ի մի երկնակաճառ, յարգող էք Սուրբ Էջմիածնին։

Փափագիդ բաղձանացդ, Աստուծով լինիս արժան,
Մովսէսի և Եղիշէի նըմանը լինիս պատմաբան,
Ով մեծ Վէմը սուրբ հաւատին, Վեհ Տէր Գէորգ Սուրէնեան
Դու մեզ երկրորդ Սահակ մնաս նըման մեծ Պարթևանին։

Տփխիս քաղաքի մեծ ցեղից չսիրեցիր աշխարհական,
Ապրեն ճանաչողները քեզ, գտան սուրբ հաւատին պաշտպան,
Կեցցէ Կայսր Ինքնակալը՝ ողորմած մեր ռուսաց Արքայն,
Ճանաչելով գնահատեց, Ինքն էլ յարգող է Յիսուսին։

Ով Վեհափառ Հայրապետ Տէր, նուաստիս ներող լինիս,
Սիրակէզ եմ սուրբ հաւատին, մեզ Մեսրովպ քարոզող լինիս,
Յուսով եմ որ Եղնիկի պէս, աղանդից հերքող լինիս
Մայր Աթոռին դու հայրաբար, խղճով կառավարող լինիս

Ողոս Ղազարեանս անուս, խաւարիս լոյս ցանող լինիս
Դպիրս միշտ յարարչէն խնդրեմ կեանք բարձր հոչակ Հովուա-
պետին։

ԴԱՐՁԵԱԼ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Լիահանճար անարատ—շնորհաց շտեմարան,
Ով Վեհափառ Վեհ Տէր Գէորգ Սուրէնեան։
Դու Տփխիսում ծնուած ես,
Բարի հոգով սնուած ես,
Անմահ Փրկչի արիւնով,
Մկրտուելով գնուած ես..
Գեղեցկատիպ պատկերիդ նմանը չի ճարուի այլ տեղ,
Ցեղիդ նման շատ երկիր չի լինի պատուելի ցեղ
Լուսինը իւր աստղերով քեզ պէս չի լինի շքեղ
Անչափ խեղճերին օգնեցիր, Երկնից իջաւ քո մեծ աստիճան։
Միլոցներ հնարեցիր
Վատ բանը դու ատեցիր,
Որքան դժուար գործ տուին
Բոլորը կատարեցիր..
Տգէտներին կատարեալ կրթութիւն տալու համար,
Ուսումնարաններ հիմնեցիր, աշխատեցիր անդադար,
Երկրորդ Դաւթի որդին ես Սողոմոն իմաստուն մեզ համար
Որովհետև Տփխիսումն էլ նորոգեցիր Վանից Տաճար..
Վասն քո բարի գործին,
Ըղձամ շատ օր քո կեանքին,
Կեանք պարգևէ Տէրը քեզ
Երկար նստես քո վեհ գահին։
Բաղդի շրջանից հեռու եմ ես չունիմ ուսում լիակատար,
Գամառ Քաթիպս լինէի կգրէի երախտիքդ բառարար.
Ողոսս յԱրարչէն ըղձամ հաստատուն գահիդ համար,
Անշամանդաղ լոյս լինիս եկեղեցւոյ ամրութեան։
Անստգիւտ ակումբ ընտիր,
Բարձր ես ունիս պատիւ,
Շատ թշուառին ես օգնել
Ըղձակերտ աստուածընտիր։

ԱՌ· Ս· ԷՋՄԻԱԾԻՆ

Մարգարտաշար շինուած սուրբ վանք, հիմքդ ամուր Էջմիածին
Արմատներ սուրբերին Հայոց, դու ունիս հիւր սուրբ Էջմիածին.
Բամքը վերին զօրաց կուտան, պատիւ Փրկչի ելած տեղին,
Գալուստ տեղոյդ հանդիսացաւ, վերին խմբով էջ սուրբ միածին

Անշամանդաղ լոյսը Հայոց, դու ես փայլում լուրջ կանգնած,
Բարուն վերինն է մէջդ ելել, քեզի հաւանողն է Աստուած,
Ուրաքանչիւր մարդուոյ հոգոյն, անունդն ես դու և մարմնոյն հա,
Տիրաշնորհ, շնորք ինձ տուր սուրբ Էջմիածին։

Լոյսը դու ես բարեաց շաւղին, պարծանք Հայոց սուրբ Էջ-
միածին
Որ երևեց ձորը կամար Գրիգորի Սուրբ Լուսաւորչին։
Յօրինուեց սուրբ վանքդ ամուր հուչակուեց իմէջն աշխարհին,
Սերովբէքը ուրախացան, որ կառուցուեց սուրբ Էջմիածին։

Ամրոց դու ես մեր փրկութեան գեղարդ Տիրոջն է սուրբ նշան
Փայլեց սուրբ անունդդ աշխարհիս մէջ, դու ես մեր ողորմած
իշխան.
Առաքուած սուրբ աղաւնին մէջդ ունիս սուրբ պատուական.
Յիշեմ անունդ կը երկնչիմ, հինգ սեղանով սուրբ Էջմիածին։

Լիահանճար սուրբ անարատ փրկութեան սուրբ շտեմարան,
Պարքք սրբոց մեծ գումարով, մարտիրոսներ մէջդ շատ կան,
Սուրբդ երգելու ժամանակ, հրեշտակք յերկնից կուրախանան,
Արդիւն հաւատին պտղաբերեալ, պարծանք Հայոց սուրբ Էջ-
միածին։

Կարօտ եմ տեսնել սուրբ տեղդ համբուրեմ սուրբ նշանները,
Համայն սուրբերի օթևան շատ ես կրթել քո թոռները,
Արիւն տիգախոց սուրբ կողէն է Փրկիչ պահապան մերը,
Յովհաննէս սուրբ Մկրտիչ մեզ բարեխօս սուրբ Էջմիածին։

Ով են մարդիք քեզ ժառացող, դու ես յոյս հաւատացողին,
Յաւ չես պատճառում ոչ ոքին կեանք պարգևող հիւանդներին,
Սուրբ վանքդ հրեշտակօք է հիմնուած անուանի ես ի մէջ աշ-
խարհին,
Ունիս Հովուապետ հոգևոր կառավարող սուրբ Էջմիածին։

Հիւրընկալ սուրբ դիմում եմ քեզ, աղաչանս լսիր Ինքդ,
Բարուն Վերինն Հովուապետիդ, ոյժ տայ ամուր պահէ
հիմքդ,
Բարեխօս սուրբ Աստուածածին քեզ են խնդրում քո ծառայքդ
Էջ Տէրն մեր աշխարհիս մէջ կայարանը, սուրբ Էջմիածին։

Զուր ես ծարաւեաց անապակ, անունդ շատ բարձր է և սուրբ
Մարգարիտ լուսափայլ տաճար, մէջիդ բոլոր զգեստները նուրբ,
Ինձպէս թշուառին ես դու յոյս, վերինն հոգով կնդրուկի տուփ
Առաջնորդ լեր մեր փրկութեան, ըղձակերտ սուրբ Էջմիածին,

Ծագիր մեզ լոյս արփիացնցուղ, ջերմեռանդ բանական հօտիդ,
Իսպառ մի մերժեր խնդիրքս, կեանք պարգևէ Հովուապետիդ.
Նա է բարձրացնող սուրբ անունդ, կառավարիչ սուրբ Տա-
ճարիդ
Ղամփարափայլ անունովդ միշտ պայծառ ես սուրբ Էջմիածին.

Սուրբ պատարագիդ ժամանակ, որքան մնամ ունիմ փափագ
Լուսաւորչի սուրբ գաւազան պայծառ մնայ և էլ սուրբ թագ,
Այժմեան Հինգերորդը լինի յուսոյ զէն բարի օրինակ,
Նրա խորհուրդը կը խնդրեմ, կատարիր սուրբ Էջմիածին։

Երկրէ երկիր կփափագին, տեսնել սրբալոյս միւռոնին,
Սրբազաններ հարքն ամենայն, հայր սուրբեր առաջ գնացին,
Թագաւոր երկնաւոր երգուեց, մաղթանք վասն Կայսեր ռուսին,
Ուրախութիւնից չկերայ երեք օր հաց Սուրբ Էջմիածին։

Ունեցել ես Հայրապետներ, յիշատակներ նոցա օրհնեալ,
Սրբոց Մասունքները բաղմած, մէջիդ սուրբ գեղարդը բարձրեալ

Հովուապետիդ կեանք պարգևէ, անունդ պահէ միշտ պայծառ,
Հաւատի անշէջ աշտանակ, ակումբ ընտիր սուրբ էջմիածին։

Բաղձանքս այս էր որ կատարէր, Իդձը սրտիս Աստուածնքան,
Յայտնեմ ինձի ով լինելս, գրեցի Պողոս Ղազարեան,
Ուրախացիր եկեղեցի, ունիմք սուրբ հաւատին պաշտպան,
Սուրէնեանց Վեհափառ Տէրը, կըպահէ անխախտ սուրբ էջ-
միածին։

1500 ԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԳԻՒՏ ԳՐՈՑ ՅՈՒԲԵԼԵԱՆԻ ԱՌԹԻՒ

Համազգային մեծ գումարով
Մեծ իղձով դուռդ ուխտ կըգան,
Սուրբ էջմիածինը մեծ խմբով.
Կըլինի մեծ հանդէս խրախճան։

Հազար հինգ հարիւր է ամեակ,
Գրոց գտնող Մեսրովպ Սուրբ Սահակ,
Օրհնեալ է սրբոց յիշատակ՝
Տառեր դարձան մեզ ճեմարան։

Օրհնեալ յիշատակին արժան.
Վասն հայոց գրոց գտման,
Կը կատարէ հնոյ մեծ յոբելիան,
Վեհափառ տէրը Սուրէնեան։

Կը խօսուի գանազան տեսակ ճառ.
Հանդիսադիրը Վեհափառ.
Պողոս, Սուրբ յիշատակ պայծառ,
Մնա մեզ միշտ լոյս երևան։

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ճոխ և քաղցր Հայոց լեզու,
Անուշիկ բառերիդ մատաղ,
Հին և նորդ լաւ պտղատու,
Տնկած մեծ ծառերիդ մատաղ։

Լոյս արծարծիր ժողովրդին,
Ճեմարան Սուրբ էջմիածին.
Յարմար գալող ամեն լեզուին։
Մեսրովպայ տառերիդ մատաղ։

Տուիր մեզ գրքեր պատուական,
Խրթին մեր Նարեկի նման,
Լոյս ճառագայթ Աւետարան.
Սուրբ գիրք գրողներիդ մատաղ։

Ով տէր Վեհափառ Սուրէնեան.
Հազար և հինգ հարիւր տարուան.
Գիւտ գրոց կըկատարես յոբէլեան,
Օրհնած Սուրբ մեռոնիտ մատաղ։

Արփիաշնորհ Մեսրովբ Սուրբ Սահակ,
Համբին դուք արեցիք խօսնակ,
Կատարէք Պողոսի փափագ.
Գտած Սուրբ ճառերիդ մատաղ։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱԽՍՀ—СССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԻՆՆ Է 15 ԿՊ.

Դիմել՝ Սուրբ Գէորգ եկեղ. ծխ. դպր. աւագ ուս.
Բ. ԲԵՐԻՆԵԱՆՑԻՆ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0341968

40514